

ՎԵՐՋԻՆ ՓՈՍՏԻՑ

ՅԵՐԵՎԱՆՈՒՄ ԻՆՉՊԵՍ ԵՆ ԸՆԴՈՒՆՈՒՄ ԻՆՔՆԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Նոյեմբերի 26-ի առաջնորդող հոդվածում («Ընտրական կամպանիան ազգային հանրապետություններում և մարզերում») «Պրավդան» քննադատություն յենթարկեց Հայաստանի կոմկուսակցության կենտկոմին: Հոդվածի մեջ մատնանշվում էր, վոր նույնիսկ հանրապետության մայրաքաղաքում, Յերևանում, ազիտացիա չի տարվում ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի պատգամավորի թեկնածուների ոգտին:

«Պրավդա»-ի նոյեմբերի 26-ին հեռագրով հաղորդված առաջնորդողը յերեկ արտատպվել էր Յերևանի բոլոր թերթերում: Ինչպես հազարդում է Հայաստանի մեր թղթակից ընկ. կոտլյարովը, Հայաստանի կոմկուսակցության կենտկոմի բյուրոն լուսվյալ է անցնում «Պրավդայի» քննադատության կողքով և չի շտապում ուղղել սխալը:

Այն մասին, թե Յերևանում ինչպես են ընդունում ինքնաքննադատությունը, խոսում և այսպիսի մի փաստ. հանրապետական «Սորհրդա»

յին Հայաստան» թերթն արտատպել է «Պրավդայի» առաջնորդողը, ընդվորում կատարելով «մի փոքր կըրմատում»: «Պրավդայում» առաջնորդողի յոթերորդ պարբերությունը շարադրված է այսպես.

«Ընտրական կամպանիայի այդպիսի, թույլ տրվի ասելու՝ ղեկավարումը Հայաստանում, առնվազն տարակուսանք և առաջացնում հանրապետության բոլոր ազնիվ կոմունիստների և անկուսակցական աչտատավորների մեջ»:

Արտատպման ժամանակ ինչ վոր մեկը ջնջել է «Հայաստանում» բառը: Այդպիսով, ընթերցողից թաքցրել են, վոր հոդվածի մեջ քննադատվում են Հենց Հայկական ԽՍՀ կազմակերպությունները: Այսպիսի վոր խորամանկ յեղանակով և խրմբագիր Անդրանիկ Իսահակյանն ուղում սվաղել ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի խայտոակ «զորվածքը» Յերևանում:

(«Պրավդա», նոյեմբերի 28, 1937 թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ Կ (Բ) Կ ԿԵՆՏԿՈՄՈՒՄ

Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի Բյուրոն, նոյեմբերի 26-ին քննության առավ ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ուղղությամբ կատարվող ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի ու ժեղացման հարցը՝ «Պրավդա»-ի նոյեմբերի 26-ի «Ընտրական կամպանիան ազգային հանրապետություններում և մարզերում» առաջնորդողի կապակցությամբ:

Կենտկոմի Բյուրոն միանդամայն ճիշտ գտավ Հայաստանում ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքի վիճակի այն գնահատականը, վոր տվել է «Պրավդան»:

ՀԿ(բ)Կ կենտկոմի Բյուրոն մի շարք ործնական միջոցառումներ նշեց

ԽՍՀՄ Գերագույն Խորհրդի ընտրությունների ազիտացիոն-պրոպագանդիստական աշխատանքն ու ժեղացնելու ուղղությամբ՝ ինչպես քաղաքում, այնպես և գյուղում:



ՀԿ(բ)Կ կենտկոմի Բյուրոն, նոյեմբերի 28-ին քննության առնելով «Յերևանում ինչպես են ընդունում ինքնաքննադատությունը» հոդվածը, արձանադրեց, վոր այդ հոդվածը միանգամայն ճիշտ նշում է «Պրավդա»-ի նոյեմբերի 26-ի առաջնորդողի թարգմանության մեջ «Սորհրդա»-յին Հայաստան» թերթի թույլ տված սխալները:

Հայաստանի Կ(բ)Կ կենտկոմի Բյուրոն վորոշեց.

«Պրավդա»-ի նոյեմբերի 26-ի առաջնորդողի թարգմանության մեջ կոպիտ սխալ թույլ տալու համար, աշխատանքից ազատել «Սորհրդային» Հայաստան»-ի պատասխանատու խմբագիր ընկ. Անդրանիկ Իսահակյանին և առաջարկել խմբագրությունը նորից տպել «Պրավդա»-ի նոյեմբերի 26-ի «Ընտրական կամպանիան ազգային հանրապետություններում և մարզերում» առաջնորդողը:

Հեռացնել աշխատանքից Գլավիտի լիազոր Վարդգես Բոյաժյանին և Աշխատանքից հանել «Սորհրդային» Հայաստան»-ի թարգմանիչ Ա. Արվաղյանին և պատասխանատուության յենթարկել նրան, վորպես «Պրավդա»-ի առաջնորդողի խեղաթյուրման համար հանցավորի:

ՈՂ ԴՄՄՆԵՐԸ

ժրացնելը: Կարելի յե նախապես այմանավորված ժամին բերել և ուն տանել Ֆիդիկապես պակասություններ ունեցող յուրաքանչյուր տրողին:

Ազիտացիոն-պրոպագանդիստական կազմակերպական աշխատանքն անատեչտ և, վորպեսզի ողնենք ամեն անդրազետ ընտրողին և վորև գրկական պակասություն ունեցող քաչանչյուր ընտրողին՝ ընտրությունների ժամանակ իր կամքի տերը ելու և վոր թե անբարեխիղճ ընտրողի ճանկն ընկնելու:

(ՏԱՍՍ)